ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-18/17» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 28 դեկեմբերի 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Բաբաջանյան, Ն.Կոլտուխչևա
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Կ.Հայրապետյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. <<ՋԻ ԹԻ ՍԻ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված լրացուցիչ տեղեկատվության գնահատման մասին,
3. Բանակցությունների կազմակերպման մասին
4. Գնահատման մասին
5. Գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
6. Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին
7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.Լրացուցիչ տեղեկատվությունների և բանակցությունների վարման մասին
(Կ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն , որ սահմանված ժամկետում <<ՋԻ ԹԻ ՍԻ>> ՍՊԸ -ի կողմից ներկայացված լրացուցիչ տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է ոչ բավարար: Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը գնահատող հանձնաժողովը որոշեց հինգ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Բանակցությունների կազմակերպման մասին
(Կ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, քանի որ 8,24,65,67 չափաբաժինների համար հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում էին նախատեսված ֆինանսական միջոցների չափը , ուստի հանձնաժողովը որոշել էր.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն վերը նշված չափաբաժինների համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. 26.12.2018թ-ին ժամը 11:00-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

Սահմանված ժամկետում գնային նոր առաջարկ է ներկայացվել <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ի կողմից 8-րդ չափաբաժնի համար՝ 411250 ՀՀ դրամ առանց ԱԱՀ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

ProTender©
www.protender.am

4. Գնահատման մասին
(Կ.Հայրապետյան)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:
Առաջարկված հայտերի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1	<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ	8,35,75

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

5. Գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
(Կ.Հայրապետյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:
Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

6. Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին
(Կ.Հայրապետյան)

Գնումների մասին << օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն 24,65,67,93-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:
(Կ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնահատման արդյունքների ամփոփման օրը, հասցե՝ ք.Երևան, Ներսիսյան 7/1 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Բաբաջանյան,
Ն.Կոլտուխչևա
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան

ProTender©
www.protender.am